



ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2017թ. մարտի 28

«Միգրացիայի օր» Երևանի պետական համալսարանի և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի ուսանողների համար

2017թ-ի մարտի 28-ին, ԵՊՀ և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի ուսանողների համար տեղի ունեցավ ինտերակտիվ դասախոսությունների շարք՝ «Միգրացիայի օր» միջոցառման շրջանակներում, որը նախաձեռնել էին Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ՄԻԲՄԱ ծրագրի շրջանակներում, Հայաստանում Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը և Երևանի պետական համալսարանին կից Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոնը: Ինտերակտիվ դասախոսությունները միտված են ընդգծել միգրացիայի և զարգացման միջև կապը:

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Արթուր Մկրտիչյանն իր երախտագիտությունը հայտնեց ՄԻԲՄԱ ծրագրին և Հայաստանում ԵՄ պատվիրակությանը ուսանողներին նման կարևոր թեմայի շուրջ ինտերակտիվ քննարկումներին մասնակցելու հնարավորություն ընձեռնելու համար և հույս արտահայտեց, որ այս նախաձեռնությունը սկիզբ կդնի մի շարք այլ նմանատիպ միջոցառումների: ՄԻԲՄԱ ծրագրի թիմի ղեկավար Կարել Հոֆսթրան նշեց, որ դասախոսությունները հնարավորություն են տալիս ուսանողներին վերհանել և քննարկել միգրացիայի տնտեսական հետևանքներին առնչվող հատուկ հարցերը: Նրա խոսքով, դա կբերի միգրացիայի, զարգացման և գործնական կիրառման ավելի խորը ընկալման:

Դասախոսությունները կարդացին Փարիզի Սորբոնի համալսարանի դոցենտ պրն Բիաջիո Սպեչիալեն, Հայկական Կարիտասի «Միգրացիա և զարգացում» և «Ճանաչել: Պաշտպանել: Իրագործել» ծրագրերի ղեկավար տկն Լուսինե Ստեփանյանը և «Ժողովուրդների զարգացման միջազգային կոմիտե» միջազգային հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության ղեկավար տկն Քրիստինա Հարությունյանը: Միգրացիայի Օրն առաջինն էր միգրացիայի վերաբերյալ դասախոսությունների շարքում, որը ՄԲՄՄԿ-ը հայաստանյան գրասենյակը նախատեսում է իրականացնել ընթացիկ տարում:

Ծրագիր

- 10:00 – 10:30 **Բացման խոսք**, պրն Արթուր Մկրտիչյան, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր և պրն Կարել Հոֆսթրա, Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի թիմի ղեկավար
- 10:30 – 12:00 **Միգրացիայի տնտեսական հետևանքներ**, պրն Բիաջիո Սպեչիալե, Փարիզի Սորբոնի համալսարանի դոցենտ
- 12:00 – 12:45 **Միգրացիայի և զարգացման գործնական ասպեկտները**, տկն Լուսինե Ստեփանյան, Հայկական Կարիտաս, «Միգրացիա և զարգացում» և «Ճանաչել: Պաշտպանել: Իրագործել» ծրագրերի ղեկավար
- 12:45 – 13:30 **Դրամական փոխանցումների դերը և ներուժը Հայաստանում**, տկն Քրիստինա Հարապետյան, «Ժողովուրդների զարգացման միջազգային կոմիտե» միջազգային հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության ղեկավար

Այլ տեղեկությունների համար՝

Իննսա Գալոյան

Հաղորդակցման գծով պատասխանատու

Միգրացիոն քաղաքականության մշակման

միջազգային կենտրոն

Հեռ՝ +374 (0) 10 520 388

Բջջ՝ +374 (0) 93 401 016

Էլ.փոստ՝ Inna.Galoyan@icmpd.org



Ծրագրի ընդհանուր նպատակը ԵՄ չափանիշներին համահունչ ՀՀ միգրացիայի և սահմանների կառավարման համակարգերի հզորացումն ու կատարելագործումն է՝ հանուն անվտանգության ամրապնդման, առևտրի խթանման, ինչպես նաև ԵՄ և ՀՀ միջև վիզային ռեժիմի հնարավոր ազատականացմանն ուղղված երկխոսությանը նպաստելու:

Ծրագիրը իրականացվում է ՄԲՄՄԿ կողմից

ՀՀ, Երևան, 0010,
Վ.Սարգսյան 26/1,
Էրեբունի Պլազա բիզնես
կենտրոն, գրասենյակ 711

Հեռ՝ +374 10 520388
Էլ.փոստ՝ mibma@icmpd.org
Վեբկայք՝ www.mibma.eu

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից

ՀՀ-ում ԵՄ պատվիրակություն
ՀՀ, Երևան, 0002,
Ֆրիկի փ.21

Հեռ՝ +374 (10) 54 64 94
Ֆաքս՝ +374 (10) 54 64 95
Էլ.փոստ՝ Delegation-Armenia@eeas.europa.eu

Եվրոպական միությունը բաղկացած է 28 անդամ պետություններից, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց փորձը, ռեսուրսները և ճակատագրերը: Համատեղ, 60 տարիների ընդլայնման ընթացքում, նրանք ստեղծել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ միաժամանակ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունը: Եվրոպական միությունը հանձն է առել կիսելու իր նվաճումները և արժեքներն իր սահմաններից դուրս գտնվող երկրների հետ: